ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**

**Հաշվետվություն թիվ 167, 15.09.2017թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և սպառիչ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Կարեն Սարգսյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Բագրատ Ճմշկյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 15.09.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

15 սեպտեմբերի 2017թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ծրագրային ազդագրում լրացում կատարելու և արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 11/10Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ 0102- N 11/10L
Դաս: ՀՊ
«14» սեպտեմբերի 2017թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 24.07.2017թ.-ի թիվ 1/587Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ծրագրային ազդագրի (այսուհետ՝ Ծրագրային ազդագիր) լրացում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ կապված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի և հսկող անձանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների հետ:
2. Թողարկել արժեկտրոնային պարտատոմսեր Ծրագրային ազդագրի և Ծրագրային ազդագրի լրացման հիման վրա՝ 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 200,000 (երկու հարյուր հազար) հատ, 51 (հիսունմեկ) ամիս մարման ժամկետով, տարեկան 5.75 (հինգ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
3. Տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի եղանակով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել Ծրագրային ազդագրի լրացումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցվելուն հաջորդող ութերորդ աշխատանքային օրը ժամը 09:00-ին և ավարտել 2017 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը

15:00-ին: Տեղաբաշխումն իրականացնել Ծրագրային ազդագրով սահմանված կարգով հաշվարկված ըստ օրերի վաճառքի գներով:

4. Մինչև սույն որոշման 3-րդ կետում նշված ժամկետի ավարտը վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
5. Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
6. Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել թողարկման օրվանից հաշվարկած 51 (հիսունմեկ) ամիս անց: Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
7. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի հունիսի 03-ի թիվ 11/01Լ որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

**Իսկականի հետ ճիշտ է՝**
**Աշխատակազմի ղեկավար՝ Մ.Ուզունյան**